ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ ք. 0015 Երևան, Արգիշտի 1, 6-րդ հարկ
Էլ. փոստ՝ civilcontract@yerevan.am

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ**

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ**

**ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

**ՎԻԼԵՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆԻՆ**

**23.01.2026թ.**

**Հարգելի պարոն Արևշատյան,**

Երևանի ավագանու քննարկմանը ներկայացնելու համար Ձեզ է տրամադրվում «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» որոշման նախագիծը:

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ**
**«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»**
**ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ** **ՔՐԻՍՏԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**«---» ----------- 2026թ.** **N ----Ն**

## ՈՐՈՇՈՒՄ

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան 8-րդ փողոցը (սկսվում է Սիլիկյան 2-րդ փողոցից, հասնում՝ Սիլիկյան 7-րդ փողոց) անվանակոչել հայ կոմպոզիտոր, քանոնահար, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Խաչատուր Ավետիսյանի անվամբ՝ «Խաչատուր Ավետիսյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՔՐԻՍՏԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**
**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հայ կոմպոզիտոր, քանոնահար, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, Խաչատուր Ավետիսյանը ծնվել է 1926թ. ապրիլի 14-ին, Լենինականում (այժմ՝ Գյումրի):

1949 թվականին բնակություն է հաստատել Երևանում ավելի լավ կրթություն ստանալու համար: Մասնագիտական կրթությունը ստացել է սկզբում Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում: Սովորել է Գրիգոր Եղիազարյանի ղեկավարած դասարանում: 1960 թվականին ավարտել է Կոմիտասի անվան կոնսերվատորիան:

1950 թվականից աշխատել է Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում, որպես քանոնի դասարանի ղեկավար և հենց այս տարիներին ստեղծել է իր հանրահայտ քանոնի համար ստեղծագործությունները:

1951 թվականին մասնակցել է Բեռլինում կայացած համաշխարհային 3-րդ փառատոնին, որտեղ անհատ կատարողների միջազգային մրցանակաբաշխությունում շահել է առաջին մրցանակ և ոսկե մեդալ: Իր ղեկավարած քանոնահարների անսամբլը 1957 թվականին Մոսկվայի համաշխարհային փառատոնում շահել է 3-րդ մրցանակ:

1958 թվականից աշխատել է Հայաստանի պարի անսամբլում որպես երաժշտական ղեկավար: Շուրջ 15 տարի աշխատելով այստեղ՝ նա ստեղծել է այդ անսամբլի պարեղանակների մեծ մասը՝ այդ թվում «Կակաչներ», «Քարավան», «Կախարդական ծաղիկներ» և մի շարք այլ պարեր: Այդ տարիներին անսամբլի հետ նա շրջագայել է շուրջ 50 երկիր՝ աշխարհին ներկայացնելով հայ բեմարվեստը:

Մեծ ժողովրդականություն են վայելում նրա երգերն ու պարեղանակները:

Գրել է երաժշտություն մի շարք կինոնկարների համար, ինչպես՝ «Խաթաբալա»-ում:

1974-1978թթ. Խ. Ավետիսյանը եղել է Թ. Ալթունյանի անվան երգի-պարի պետական անսամբլի գեղարվեստական ղեկավարը: Այստեղ էլ նա կարճ ժամանակում ստեղծել է մի քանի նոր ծրագրեր անսամբլի համար՝ հարազատ մնալով իր ազգային ավանդույթներին:

1978թ. հիմնել է ԵՊԿ ժողովրդական նվագարանների և երգեցողության ամբիոնը, որը ղեկավարել է մինչև կյանքի վերջ:

1961թ.՝ արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր արտիստի, 1965թ.՝ ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործչի, 1984թ.՝ ՀԽՍՀ ժողովրդական արտիստի կոչումներին:

Խաչատուր Ավետիսյանը մահացել է 1996թ. հունիսի 27-ին, Երևանում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի

N2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՔՐԻՍՏԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ**




No need to print. Just install Yandex Maps on your phone

## Silikyan 8th Street

Yerevan, Silikyan 8th Street